Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԸ ՌԻԳԱՅՈՒՄ

Մեր հայրենակիցները հոգևոր ուրախության և վերազարթոնքի օրեր են ապրում նաև ներքին սփյուռքում: Մերձբալթիկայում առաջին անգամ վեր է խոյանալու Հայց. Եկեղեցու հավատացյալների աղոթատունը:

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին, առավոտյան, հարյուրավոր հայորդիներ էին հավաքվել՝ մասնակցելու կառուցվելիք Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնօրհնեքի սրբազան արարողությանը: Արարողությանը մասնակցելու էին եկել նաև Լատվիայի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Լավրենտին և Լատվիայում Լյութերական Եկեղեցու պետ Ցանիս Վանագսը, գրող, բանաստեղծ Մարիս Զակլայսը:

Հիմնօրհնեքի արարողապետն էր Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը՝ ընթերակայությամբ Տ. Վահան քհն. Սարիբեկյանի:

Եվ թեև ցուրտ և ձնախառն եղանակ էր, բայց արարողությունը չընդհատվեց: Եվ հիմքի քարերը, որոնք նախ ջրով լվանում էր Տ. Վահան քհն. Սարիբեկյանը, իսկ Սրբազան հայրը Ս. Մյուռոնով օծում, պահում էին համայնքի անդամների զավակները: Եվ ինչպես իր խոսքում ասաց Գեր. Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը՝ «Երեխաների համար սա կլինի հիշողություն իրենց ամբողջ կյանքի ընթացքում, նրանք դեռ իրենց երեխաներին ու թոռներին պիտի պատմեն, որ մասնակցել են տաճարի հիմնօրհնեքին»:

Հիմնօրհնեքի արարողությունից հետո, Սրբազան հոր առաջնորդությամբ, գնացին Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ս. Ծնունդ տաճար, ուր կատարվեց հանդիսավոր ժամերգություն, և որի ընթացքում քարոզ խոսեց Սրբազան հայրը՝ իր խոսքը խարսխելով հայ-ռուս և հայ լատիշ ժողովուրդների բարեկամության վրա:

Իր սրտի խոսքը ասաց նաև Լյութերական Եկեղեցու պետ Ցանիս Վանագսը. «Ես շատ ուրախ եմ, որ Լատվիայում արմատավորվում է հին և շատ գեղեցիկ մի ավանդույթ, այն դեպքում, երբ Լատվիա են գալիս նոր կրոնական հոսանքներ, կարծում եմ, որ սա կարևոր իրադարձություն է Լատվիայի բոլոր քրիստոնյաների համար»:

Իսկ գրող Մարիս Զակլայսը, որը քաջածանոթ է հայկական մշակույթին և թարգմանություններ է կատարում հայերենից, հայ ժողովրդին նվիրված իր պոեմից կարդաց հատվածներ:

Հայերը Լատվիայում հաստատվել են առաջին Հանրապետության շրջանում 1938 թ., և այժմ տեղի հայ համայնքի անդամների թիվը հասնում է մոտ 3.000-ի:

Տաճարը կառուցվելու է տեղի հայության միջոցներով, որի կառուցումը պետք է ավարտվի 2001 թ. հունիսի մեկին՝ մի քանի օր շուտ, երբ ամբողջ քրիստոնյա աշխարհը կտոնի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Եվ ինչպես հույս հայտնեց համայնքի նախագահ Ս. Տեր-Ավետիսյանը, տաճարի կառուցումը կավարտվի նշված ժամանակին:

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՅԱՆ